

Աշնան նորաձեւութիւնը շատ տուներու մէջ կոռոյ դռներ կրանայ: Երեւելի մարդ մը կմեռնի: Ածխավաճառները կլեցնեն իրենց մթերանոցները: Աստուած խելք տայ իրենց:

16 - 23 Յոկտեմբեր

Խառնակ, խառնակ, վերջապէս խառնակ:

Սրտի հիւանդութիւն ունեցողները կնեղուին. երանի անոնց, որ սիրտ չունին, ազատ են այդ հիւանդութենէ: Լրագրին մէկը երեկուան պաշտածն այսօր կայրէ: Ջերմուկներու վարժուած կրօնաւոր մը անարժանաբար արձողի մը վրայ բարձրանալու կպատրաստուի, ազգին սանձերը բռնելու համար. Աստուած ողորմի: Հարուստ աղջիկ մը հօրը տունէն կփախչի:

23 - 31 Յոկտեմբեր

Հողմ եւ անձրեւ: Թատրոններու եղանակ, բոլոր օթեակները պարապ են:

Եօթն շաբաթուց վերջերն ենք, հարսնիք չլսուիք բնաւ. *թրաքօման* մեծ հարուած տուաւ այս տարի, թէ՛ գեղեցիկ աղջիկներուն եւ թէ՛ տգեղներուն:

Ամսոյս մէջ ծնող մանչերն փառաւոր ապագայ կխոստանան, աղջիկներն ալ փայլուն անցեալ մը. ըստ այնմ վարուեցէք:

ՆՈՅՆՄԲԵՐ

1 - 7 Նոյեմբեր

Օդին խառնակութիւնը շարունակելի է:

Հարուստ կարծուած մէկը գիրքերը վիճակահանութեան կդնէ:

Ածխավաճառները կսխալին իրենց գուշակութեանը մէջ, օդը թէւ խառնակ, այլ բարեխառնակ է:

Ծովային ճանապարհորդութենէ հրաժարելու է: Լրագրի մը մէջ շինծու նամակներ կհրատարակուին. հաւատալու չէ:

Աղքատ մարդ մը գինով կ'ըլլայ եւ փողոցը կպառկի՝ քթին տակէն մրմռալով. «Ես բանաստեղծ եմ»:

8 - 15 Նոյեմբեր

Այս խառնակութեան վերջը...